ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 07.10.2015թ. ստացվել է բողոք:

Բողոք բերող անձ՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ

Պատվիրատու՝ Ծաղկաձորի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/7» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, Ծաղկաձորի քաղաքային զբոսայգու գլխավոր ճեմուղու լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի առարկան և պահանջը՝ Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից Ծաղկաձորի քաղաքային զբոսայգու գլխավոր ճեմուղու լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/7» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2015թ. թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշման կատարումը կասեցնելու, 23.09.2015թ. թիվ 2 և 01.10.2015թ. թիվ 4 արձանագրություններով ընդունված որոշումները դադարեցնելու մասին:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ